

DOI: 10.59560/18291155-2023.4-11



ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի օգնական, իրավաբանական գիտությունների թեկնածու

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ «ՄՈՒՏՔԻ» ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ «ԿԱՍԿԱԾԻ» ՇԵՄԸ (ԻՆԵՐՑԻԱՅԻ ՈՒԺԸ ԿԱՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ԱՆՏԵՍՈՒՄԸ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ԴՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ)

Ամփոփագիր

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) ուժի մեջ մտնելու այս արդեն ոչ կարճ ժամանակահատվածում ի հայտ եկավ հետաքրքիր մի հանգամանք, հայկական իրավակիրառ պրակտիկան չնկատեց (կամ անտեսեց) այն առանցքային, բնորոշման մեջ շոայլ չէ ասել՝ անգամ հեղափոխական փոփոխությունը, որ տեղ էր գտել օրենսգրքում և ուղիղ կապված էր անձի մեղադրյալի կարգավիճակի հետ:

Իրավակիրառ պրակտիկան չնկատեց (կամ անտեսեց) Օրենսգրքով հանրային մեղադրանքի գործերով մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ «կասկածի» «խորհրդային» շեմից հրաժարումը և կասկածի բոլորովին նոր շեմի, չափանիշի սահմանումը:

Միևնույն ժամանակ, սակայն, հողվածում փորձ է արվում հիմնավորվել, որ օրենսդիրը հրաժարվել է «խորհրդային» «կասկածի» շեմից միայն մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար, իսկ մեղադրյալի

4(112)2023
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
11

մինչդատական վարույթից (դեպի դատական վարույթ) «ելքի» համար այդ չափանիշը պահպանվել է:

Սույն հոդվածը նվիրված է մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար կասկածի շեմերի փոփոխության հարցերին, քննարկվում է նման փոփոխության անտեսումը իրավակիրառ պրակտկայում, ինչպես նաև բացահայտվում նման փոփոխությունների պայմաններում քրեադատավարական մի շարք երաշխիքների կենսագործման հնարավորությունները:

Հիմնաբառեր. մեղադրյալ, կասկածի շեմ, նվազագույն կասկած, հիմնավոր կասկած, բավարար ապացույցների համակցություն, քրեական վարույթի սուբյեկտ, քրեական վարույթի օբյեկտ:

1. Ընդհանուր դրույթներ

Մեղադրյալի «մուտքը» քրեական դատավարություն տեղի է ունենում երկու ձևով. (1) դատախազի կողմից հանրային քրեական հետապնդում հարուցելու (Օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մաս, 6-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ) կամ (2) մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի կողմից դատարան ներկայացրած քրեական հայցի հիման վրա դատարանի կայացրած քրեական վարույթ սկսելու որոշման հիման վրա (Օրենսգրքի 453-րդ հոդվածի 2-րդ մաս):

Նախկինում այն դատավարական որոշումը, որով տեղ էր գտնում մեղադրյալի «մուտքը» քրեական դատավարություն, հենց կոչվում էր «անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում» (1998 թ. քր. դատ. օր.-ի 202-րդ հոդված), նոր օրենսգրքով հանրային մեղադրանքի գործերով այդ դատավարական ակտը անվանափոխվեց՝ հիմք ընդունելով ոչ թե դրա արդյունքը (մեղադրյալի «մուտքը»), այլ՝ այդ ակտի գործառնական նշանակությունը՝ դրանով ազդարարվող ձևական քրեական հետապնդման հարուցման սկիզբը: Ըստ այդմ՝ ակտն անվանակոչվեց «հանրային քրեական հետապնդում հարուցելու» որոշում:

ՍԱՀՄԱՆԱՂՈՐԿՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ
◆ 4(112)2023

2. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» (կարգավիճակ ձեռք բերելու) համար անհրաժեշտ «կասկածի» շեմը¹

Մեղադրյալի, նրա օրինական շահերի ապահովման տեսանկյունից առանցքային կարևորություն է ստանում այն հարցը, թե «կասկածի» ի՞նչ շեմի առկայության դեպքում է, որով պաշտոնապես (ձևական առումով) քրեական հետապնդում հարուցելու պաշտոնական փաստաթղթում պետք է ամրագրվի մեղադրյալի մուտքը քրեական դատավարություն:

2.1. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ «խորհրդային»՝ կասկածից վեր, համոզմունքի չափանիշի ձևավորումը

Հարցի վերաբերյալ ռուսական և հայկական մասնագիտական գրականության մոտեցումը (1800-ական թվականների վերջերից սկսած) եղել է այն, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է «կասկածի» խիստ բարձր աստիճանի շեմ:

Այսպես, եթե 1800-ականների վերջի և 1900-ականների առաջին տասնամյակի գրականության մեջ (մինչհեղափոխական գրականության)² նշվում էր, որ նման որոշման կայացման համար անհրաժեշտ էր «համոզվել, որ քննությանը ներգրավված անձը հիմնավորապես կասկածվում է հանցանքի մեջ»³ (ընդգծումը՝ Հեղ.), ապա արդեն 1930-40-ականներից սկսած իրավակիրառ պրակտիկայում անձին որպես մեղադրյալ էին ներգրավում միայն նրա մեղավորության խիստ բարձր կասկածի շեմի առկայության, իսկ հետո նաև՝ կասկածից վեր ապացուցվածության՝ համոզման շեմի առկայության պայմաններում:

Այդպիսի մոտեցման արդյունքում, որով ըստ էության կա՛մ կասկածի չափազանց բարձր, կա՛մ կասկածից վեր՝ համոզման, շեմ էր դրվում անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման կայացման համար, ժամանակային առումով ինքնաբերաբար հետ էր ընկնում այդ որոշման կայացումը և, որպես արդյունք, մեղադրյալի «մուտքը» (անձի՝ մեղադրյալի

¹ Հոդվածում քննարկվելու են միայն հանրային մեղադրանքի գործերով մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» և մեղադրյալի՝ մինչդատական վարույթից (դեպի դատական վարույթ) «ելքի» համար անհրաժեշտ «կասկածի» շեմերի հարցերը:

² Խոսքը Հոկտեմբերյան հեղափոխության մասին է:

³ Ст'я Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Том I. Издание 4-е. – СПб: Типография товарищества "Общественная польза", 1912, էջ 75:

կարգավիճակ ձեռք բերելը) հեղաձգվում էր դեպի մինչդարական վարույթի ավարտական փուլ¹:

Այս պրակտիկան պատկերավոր նկարագրում է խորհրդային անվանի դատավարագետ Մ. Չելցովը՝ նշելով, որ գործի նյութերը սպառիչ հավաքելուց հետո էին քննիչները նոր միայն որոշում կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, հարցաքննում նրան, իսկ այնուհետև՝ հայտարարում քննության ավարտի մասին²:

Թեև այդ պրակտիկան սկզբնական շրջանում միանշանակ չէր ընդունվում գիտական հանրության կողմից, և որոշ ականավոր դատավարագետներ շարունակում էին պնդել, որ որպես մեղադրյալ ներգրավելու համար ոչ թե *համոզմունքի* առկայություն, այլ միայն *կասկածի որոշակի* չնչին շեմի առկայություն է անհրաժեշտ, և որ անձին իբրև մեղադրյալի ներգրավումը և նրանից հարցաքննությամբ ցուցմունքներ ստանալը ոչ մի դեպքում *չպետք է լինեն վերջին քննչական գործողությունները*³, այնուամենայնիվ, իրավակիրառ պրակտիկան և գիտական հանրության մեծամասնությունը, այլ՝ *հակառակ մոտեցման կողմանկից էր*: Մեծամասնության տեսակետն այն էր, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է իրավասու մարմնի *ըստ էության բացարձակ համոզվածությունը անձի կողմից հանցանքի կատարման մեջ*⁴:

1960-ականներին մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար գիտության մեջ և իրավակիրառ պրակտիկայում գերակշռող այդ մոտեցումն արդեն օրենսդրական ամրագրում ստացավ. քրեական դատավարության օրենսգրքում ուղիղ ամրագրվեց որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելու *ոչ թե կասկածի, այլ անհրաժեշտ*

¹ Տե՛ս **Коновалов С.Г.** Постсоветские реформы досудебного производства в свете германских процессуальных институтов. - М.: ИД «Городец», 2023, էջ 165:

² Տե՛ս **Чельцов-Бебутов М.А.** Обвиняемый и его показания в советском уголовном процессе. - М.: Изд-во Министерста Юстиции СССР, 1947, էջ 15:

³ Տե՛ս **Чельцов-Бебутов М.А.** նշվ. աշխ., էջ 15:

⁴ Տե՛ս **Полянский Н.Н.** Вопросы теории советского уголовного процесса. - М. 1956, էջ 186, **Жогин Н.В., Фаткуллин Ф.Н.** Предварительное следствие в советском уголовном процессе. - М., 1965, էջ 191-192:

«համոզմունքի» շեմ պահանջող չափանիշը¹ այդ որոշման համար ձևակերպելով բանաձևային նշանակություն ունեցող հանրահայտ «բավարար ապացույցների համակցության» չափանիշը:

Այդ կերպ, հայկական քրեական դատավարություն մտավ «բավարար ապացույցների համակցության» հիման վրա անձի կողմից հանցանք կատարելու համոզմունքի չափանիշը (1961թ. ՀԽՍՀ քր. դատ. օր.-ի 135-րդ հոդված), որը պահպանվեց մինչ 2021թ. (1998թ. Քր. դատ. օր.-ի 202-րդ հոդված):

Արդեն 1980-ականների վերջերին քրեական դատավարության ամենահեղինակավոր դասագրքերում (կուրսերում) տեղ գտած մոտեցումներով անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելու համար անհրաժեշտ կասկածի շեմի վերաբերյալ այդ մոտեցումն ըստ էության առանցքային կերպով գերիշխող դիրք ուներ:

Ավելին, այդ ժամանակաշրջանում դոկտրինում սկսեց ձևավորվել այն մոտեցումը, որ «բավարար ապացույցների համակցությունը» կարող է ձևավորված համարվել, երբ գործով ձեռք բերված ապացույցներով ապացուցվեն **հանցակազմի բոլոր տարրերը**, այդ թվում՝ անձի մեղավորությունը: Գիտության մեջ նշվում էր, որ միայն այդ դեպքում է, որ ապացույցների համակցության գնահատման հիման վրա հնարավոր կլինի

¹ Անգամ օրենսդրորեն «բավարար ապացույցների համակցության» չափանիշի ամրագրումից հետո էլ գիտության մեջ փորձեր եղան հակազդելու որպես մեղադրյալ ներգրավելու համար «համոզմունք» ունենալու չափանիշին, սակայն, ապարդյուն: Այսպես, օրինակ, խորհրդային ականավոր քրեադատավարագետներից Մ. Ստրոգովիչն այս առնչությամբ նշում էր. «Օրենքը չի խոսում այն մասին, որ այդ ապացույցները պետք է բավարար լինեն մեղադրյալին մերկացված համարելու, մեղավոր համարելու, մեղադրյալին հանցագործ համարելու համար»: Գիտնականը նկատում էր, որ անձին որպես մեղադրյալ ներգրավումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունն ապացուցված է, քանի որ «հենց իր՝ քննիչի համար անգամ անձին որպես մեղադրյալ ներգրավելը չի համարվում մեղադրյալի մեղավորության մասին վերջնական եզրահանգում» (ընդգումները՝ հեղ.) (տե՛ս **Строгович М.С.** Право обвиняемого на защиту и презумпция невиновности / М.С. Строгович; под ред. [и с предисл.] Савицкого В.М. - Москва: Наука, 1984, էջ 33): Նույն ժամանակներում, մեղադրյալ ներգրավելու կասկածի շեմի բարձրացման միտումի դեմ ընդվզում էին այլ հեղինակներ, օրինակ, Ա. Լարինը գրում էր, որ մեղադրյալ ներգրավելու որոշմամբ (հեղինակը օգտագործում է քրեական պատասխանատվության ներգրավել հնացած եզրույթը:) «... մեղադրյալի մեղավորության մասին քննիչի եզրահանգումը վերջնական չէ, հավաստի չէ, այլ նախնական է, խնդրահարույց, հավանական գիտելիք է, այսինքն հանդիսանում է վարկածներից մեկը» (ընդգծումը՝ հեղ.) (տե՛ս **Ларин А.М.** От следственной версии к истине. - М.: Юрид. лит., 1976, էջ 143):

«հավաստի» եզրահանգման հանգել առ այն, որ անձը կատարել է իրեն վերագրվող հանցանքը, այլ կերպ ասած՝ միայն այդ պայմաններում է, որ կարող է առկա համարվել անձի կողմից հանցանք կատարելու իրավասու մարմնի **համոզմունքը**:

Այսպես, խորհրդային քրեական դատավարության վերջին կուրսի հեղինակները այս առումով գրում էին. «(...) անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է հաստատել *հանցագործության դեպքը հաստատող փաստական հանգամանքները, կատարված արարքում հանցակազմի առկայությունը և տվյալ անձի մեղավորությունը*: (...) Սխալ կլինի ենթադրել, որ մեղադրանքի առաջադրման պահին հավաքված ապացույցները պետք է բավարար լինեն *միայն ենթադրելու, այլ ոչ թե համոզելու համար, որ հանցագործությունը կատարել է որպես մեղադրյալ ներգրավված անձը*: Գործնականում դա կարող է հանգեցնել քաղաքացիների անհիմն հետապնդման և քաղաքացիների անձնական և գույքային իրավունքների ոտնահարման: (...) Այդ իսկ պատճառով որպես մեղադրյալ ներգրավմանը *պետք է նախորդի անձի մեղավորության համոզմունքը՝ հիմնված քոլոր ապացույցների* համակցության գնահատականի վրա: Այլ կերպ ասած՝ քննիչը պետք է ունենա տվյալների այնպիսի ամբողջականություն, որը բավարար հիմքեր կտար որպես մեղադրյալ ներգրավելու հիմքերի առկայության մասին *հավաստի, այլ ոչ թե հավանական* եզրակացության համար» (ընդգծումները՝ Հեղ)՝:

Միջանկյալ եզրահանգումներ

Որոշակիորեն ընդհանրացումներ անելով կարելի է փաստել, որ խորհրդային դատավարական գրականության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ թե՛ դոկտրինալ մակարդակում, թե՛ նաև իրավակիրառ պրակտիկայում կար միտում էլ ավելի բարձրացնելու անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար կասկածի առանց այն էլ բարձր՝ դեռ 1800-ականների վերջերից ձևավորված շեմը:

¹Տե՛ս Курс советского уголовного процесса. Общая часть / **Алексеев В.Б., Алексеева Л.Б., Божьев В.П., Бойков А.Д. и др.** / Под ред. Бойкова А.Д., Карпеца И.И. - М.: Юрид. лит., 1989, էջ 458-459:

Արդյունքում՝ խորհրդային գիտության մեջ գերակշռող ընկալում ձևակերպվեց, որ քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ է կասկածից վեր չափանիշ՝ **համոզմունք**, որն էլ հետագայում արդեն ձևակերպվեց խորհրդային օրենսդրի կողմից հանրահայտ **«բավարար ապացույցների համակցություն»** բանաձևային նշանակություն ունեցող բառակապակցությամբ:

«Բավարար ապացույցների համակցությունը» հավասարվեց հանցակազմի բոլոր տարրերի ապացուցվածության և անձի մեղավորության մասին համոզմունքին:

2.2. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար «կասկածի» անհրաժեշտ շեմի վերաբերյալ ժամանակակից ռուսական մտքեցումները

Ժամանակակից ռուսական հեղինակավոր դասագրքերում և քրեական դատավարության օրենսգրքի գիտագործնական մեկնաբանություններում նույնպես պահպանվում է մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար կասկածից բարձր՝ համոզմունքի շեմի խորհրդային իրավունքից եկող մոտեցումը:

Ռուս գիտնականները նշում են, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է, որ *բավարար ապացույցներով, այսինքն՝ վերաբերելի, թույլատրելի և հավաստի ապացույցների համակցությամբ հաստատվեն* ապացուցման ենթակա այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են դեպքը (ժամը, տեղը, միջոցը և հանցանքի կատարման այլ հանգամանքները), անձի *մեղավորությունը* հանցանքի կատարման մեջ, *նրա մեղքի ձևն ու հանցանքի կատարման շարժառիթը*, այն հանգամանքները, որոնք բնութագրում են մեղադրյալին, ինչպես նաև հանցանքով պատճառված վնասի բնույթն ու չափը¹: Ըստ այդմ՝ նշվում է,

¹ Ст'ю Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. - М.: Статут, 2017, էջ 735, տե՛ս նաև՝ mutatis mutandis Научно-практический комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации / Под общ. ред. В.М. Лебедева; науч. ред. В.П. Божьев. - 7-е изд., перераб. и доп. - М.: Изд. Юрайт, 2010, էջ 529:

որ այս որոշմամբ արձանագրվում է, որ անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածը վեր է ածվել համոզվածության¹:

Վերջին հրատարակություններում արդեն այս մոտեցումը էլ ավելի է խորանում: Այսպես, օրինակ, դոկտոր Ս. Ռոսսինսկին, արձանագրելով, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար «բավարար ապացույցների համակցությունը» պետք է «(...) կանխորոշի քննիչի գործնականում **բացարձակ համոզվածությունը** վերագրվող քրեորեն հետապնդելի արարքի կատարմանը անձին մերկացման մեջ»², նշում է, որ այդ որոշումը նախնական քննության, քննիչի աշխատանքների **արդյունքը պետք է լինի**, որ այդպիսի որոշում կայացնելիս քննիչը պետք է «բացարձակ համոզված լինի իր կողմից ներկայացված քրեաիրավական պահանջի անվիճելիության և ապացուցվածության մեջ, այսինքն՝ մեղադրանքի կողմի համար դրական ելքով քրեական գործի հետագա դատական հեռանկարի մեջ»³ և որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշմամբ, որպես **ընդհանուր կանոն**, պետք է *ավարտվի նախնական քննության հիմնական, այսինքն՝ «քննության» փուլը*⁴:

Այս առնչությամբ գիտնականը նշում է, որ այդ որոշումը պետք է «...հանդիսանա ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների հաստատման ուղղությամբ կատարված քննչական (այլ դատավարական) գործողությունների համակցության **տրամաբանական ավարտը** և իրականացվի (կայացվի՝ Հեղ.) քրեական գործի նյութերը հետագա

¹ Տե՛ս **Коновалов С.Г.** Постсоветские реформы досудебного производства в свете германских процессуальных институтов. - М.: ИД «Городец», 2023, էջ 166: Այս համատեքստում ուշադրության է արժանի, որ անձին վաղաժամ մեղադրյալ ներգրավելը մեղադրանք ներկայացնելու համար հիմք ծառայող բավարար ապացույցների համակցության բացակայության պայմաններում Ռուսաստանի բարձր դատարանների կողմից ևս քննադատվել է ու գնահատվել իբրև օրենքի պահանջների չպահպանում և անձի ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների անհիմն սահմանափակում, տե՛ս Определение Конституционного Суда РФ от 21.12.2004 N 467-О "По жалобе гражданина Пятничука Петра Ефимовича на нарушение его конституционных прав положениями статей 46, 86 и 161 Уголовно-процессуального кодекса Российской Федерации":

² Տե՛ս **Россинский С.Б.** "Пилотные" обвинения в досудебном производстве по уголовному делу не только противозаконны, но и безнравственны // Судебная власть и уголовный процесс, 2021, No 3, էջ 77:

³ Տե՛ս **Россинский С.Б.** Նշվ. աշխ., էջ 77:

⁴ Տե՛ս **Россинский С.Б.** Նշվ. աշխ., էջ 79:

քննության համար դատարան ուղարկելու նախաշեմին»¹: Ուստիև, հեղինակը *խստագույն քննադատության է ենթարկում նախնական քննության ավելի վաղ փուլում որպես մեղադրյալ ներգրավելու այն իրավակիրառ պրակտիկան, երբ քննիչները որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու՝ առանց մեղադրյալի հանցանքի մեջ մեղավորության համոզմունքի՝ այդպիսի որոշումներն անվանելով «պիլոտային» մեղադրանքներ², որոնք, ըստ նրա, ապօրինի են և բարոյական տեսանկյունից խնդրահարույց:*

2.3. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար «կասկածի» անհրաժեշտ շեմի վերաբերյալ ժամանակակից հայկական մոտեցումները (1998 թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործողության պայմաններում)

1998 թ. քրեական դատավարության օրենսգիրքը նույնպես պահպանել էր քրեական դատավարություն մեղադրյալի «մուտքի» համար (որպես մեղադրյալ ներգրավելու որոշման համար) կասկածից բարձր՝ համոզմունքի շեմը ամրագրող չափանիշը: 1998 թ. քր.դատ.օր.-ի 202-րդ հոդվածի 1-ին մասում իր ամրագրումն էր ստացել անձի մեղավորության մասին համոզմունքի, հանցակազմի բոլոր տարրերի ապացուցվածության խորհրդային բանաձևումը. անձը կարող էր որպես մեղադրյալ ներգրավվել հանցանքի մասին վկայող **«բավարար ապացույցների համակցության»** հիման վրա: Ըստ այդմ՝ թե՛ դոկտորինը³ և թե՛ իրավակիրառական պրակտիկան, պահպանելով խորհրդային իրավունքին բնորոշ մեղադրյալի «մուտքի» համար կասկածի այդ բարձր շեմը, նաև պահպանում էին ավանդական այն մոտեցումը, ըստ որի ապացույցների «բավարարության» շեմը առկա կլինի, երբ այն *«ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական փվյալները»*⁴:

¹ Տե՛ս **Россинский С.Б.** նշվ. աշխ., էջ 79:

² Տե՛ս **Россинский С.Б.** նշվ. աշխ., էջ 81:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), Մաս 2, Գիտ., խմբ. Ա.Ղամբարյան: Երևան, Տիգրան Մեծ, 2017, էջ 381:

⁴ Տե՛ս Կոնաբեկ դատարանի 05.11.2010 թ. կայացրած թիվ **ՏԴ/0115/01/09 որոշման** 18-րդ կետը:

Այլ կերպ ասած՝ որպես մեղադրյալ ներգրավելու «բավարար ապացույցների համակցության» չափանիշը ևս մեկնաբանվում և կիրառվում էր այնպես, ինչպես ավանդական խորհրդային մոտեցման դեպքում էր. դրա համար անհրաժեշտ էր «կասկածից» վեր շեմ՝ *հանցակազմի բոլոր հատկանիշների ապացույցների համակցությամբ հաստատում*¹ (անձի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների պարզումն այդ որոշման համար ոչ պարտադիր էր և կարող էին բացահայտվել վարույթի հետագա ընթացքում²):

Նման պայմաններում, հատկապես 2000-ականների սկզբերի իրավակիրառ պրակտիկայում հաճախ էր հանդիպում անձին որպես մեղադրյալ ներգրավումը նախաքննության ավարտին մոտեցող պահերին³:

3. Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի «խորհրդային» բարձր շեմի դիլեման

Քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի բարձր շեմը հիմնավորվում էր անձին քրեական հետապնդման չենթարկելու, նրա անձնական և գույքային իրավունքներն անհարկի չսահմանափակելու նպատակով:

Սակայն, մեղադրյալի վարույթ «մուտքի» համար կասկածի շեմի բարձրացմանն ուղիղ համեմատական «հետաձգվում էր» անձի կողմից մեղադրյալի կարգավիճակի ձեռքբերումը նախաքննության ընթացքում՝ տեղափոխելով մեղադրյալի «մուտքը» նախաքննության վերջնամաս:

Իր հերթին մեղադրյալի «մուտքը» նախաքննության վերջնամաս տեղափոխելը ստեղծում էր մի վիճակ, երբ անձը, ում նկատմամբ առկա էին որոշ տվյալներ, որոնք վկայում էին նրա կողմից հանցանք կատարելու հնարավորության մասին, ավելին, անգամ այն դեպքերում, երբ նրա՝

¹ Տե՛ս նաև՝ **Бишарян К.А.** Подозреваемый и защита его прав в уголовном процессе Республики Армения: Монография / Под ред. проф. В.П. Божьева. - Ер., 2007, էջ 27:
² Տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ), Մաս 2, գիտ. խմբ. Ղամբարյան Ա.: Երևան, Տիգրան Մեծ, 2017, էջ 377:
³ Տե՛ս **Ավագյան Վ.**, Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը, - Եր.: «Օրենք և իրականություն» հրատ., 2006, էջ 135-136:

ՍԱՀՄԱՆԱԿՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐՈՎՈՒՄ
◆ ՏԵՂԵԿՎՈՐ
◆ 4(112)2023

հանցանքի կատարման մերկացման ուղղությամբ կարող էին կատարվել քննչական գործողություններ, *հանդես չէր գալիս վարույթում իբրև սուբյեկտ*, նա չէր օժտվում հստակ կարգավիճակով և շարունակում էր վարույթին մասնակցել ոչ թե մեղադրյալի, այլ՝ առավելագույնը վկայի կարգավիճակում՝ չունենալով իր դեմ իրականացվող փաստացի քրեական հետապնդումից պաշտպանվելու հնարավորություն և **այդպիսով իսկ վարույթում հանդես գալով առավելապես իբրև օբյեկտ**¹:

Այլ կերպ ասած՝ մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար շեմի բարձրացումը սպեղծում էր մի դիլեմա. խորհրդային օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, դոկտրինը անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար որքան բարձրացնում էին կասկածի շեմը, այնքան վրանգվում էր ենթադրյալ հանցանք կատարած անձի (փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի) իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, քանի որ վերջինս չէր ունենում իր դեմ իրականացվող փաստացի քրեական հետապնդմանը հակազդելու որևէ իրավական կարգավիճակ: **Ուստիև վերջինս գործնականում մինչդարական վարույթին (մինչ դրա վերջնամասը) հանդես էր գալիս առավելապես իբրև օբյեկտ:**

4. Քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի տարբերակումը (դիֆերենցացիան)¹ իբրև խորհրդային (հետխորհրդային) իրավունքում մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի «խորհրդային» բարձր շեմի գործարկման անհրաժեշտ պայման

¹ Մարդու, նրա արժանապատվության պետության կողմից արժևորման և քրեական դատավարությունում մեղադրյալի սուբյեկտայնացման կապի, այդպիսի արժևորման բացակայության և քրեական դատավարությունում մեղադրյալի՝ իբրև դատավարական օբյեկտ հանդիսանալու հարցերի մասին, տե՛ս **Ղազարյան Ա.**, Մայրցամաքային խառը տիպի քրեական դատավարությունում մեղադրյալի սուբյեկտայնացման համընդհանուր միտումը և դրան հակառակ ընթացող հայկական օրենսդրական զարգացումները (վերաքննիչ դատարանում գրավոր ընթացակարգով կալանքի (դրա երկարաձգման) միջնորդությունների քննության արդյունքում կայացված որոշումների վերանայման լույսի ներքո): ՀՀ Սահմանադրական դատարան, Տեղեկագիր, No 3 (111) 2023, էջ 67-111:

Խորհրդային իրավակիրառ պրակտիկան (sic!), բախվելով վերը նշված խնդրին, վերադարձրեց քրեական հետապնդման ենթարկվող անձի **սուբյեկտայնությունը**. սկսեց աստիճանաբար ձևավորել մի նոր սուբյեկտ՝ «կասկածյալ» սուբյեկտ, որը հետագայում արդեն՝ 1960-ականներից սկսված, իր ամրագրումը ստացավ խորհրդային (հետխորդային) քրեական դատավարության, այդ թվում՝ հայկական օրենսգրքերում:

Այսինքն՝ խորհրդային (հետխորհրդային) իրավունքում մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի բարձր շեմով ստեղծվող բացը սկսեց լրացվել և քրեական հետապնդման ենթարկվող անձի օբյեկտայնացման խնդիրը լուծվել քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի տարբերակմամբ (դիֆերենցացիայով)՝ ըստ կասկածի աստիճանի:

Քրեական հետապնդման ենթարկվող անձը մինչ մեղադրյալի կարգավիճակ ստանալը, այսինքն՝ մինչ վարույթն իրականացնող մարմնի՝ նրա կողմից հանցանքի կատարման կասկածից բարձր՝ համոզմունքի ձևավորումը (մինչ անձի մեղավորության և հանցակազմի բոլոր այլ տարրերի ապացուցումը), հնարավոր է ստանար կասկածյալի կարգավիճակ¹՝ այդպիսով ձեռք բերելով սուբյեկտի կարգավիճակ մինչդաստիճանի վարույթի ավելի վաղ շրջանում, որով էլ հնարավոր էր դառնում որոշակիորեն լուծել նրա իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության խնդիրը:

5. *Քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի միասնականացումը (ունիֆիկացիան) և մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմի իջեցումը, որպես քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության միջոց*

¹ Եթե 1998 թ. ՀՀ քր. դատ. օր.-ով կար կասկածյալի կարգավիճակի ձեռքբերման երկու հիմք՝ ձեռքակալվելը կամ խափանման միջոց անձի նկատմամբ կիրառվելը (1998 թ. քր. դատ. օր.-ի 62-րդ հոդվածի 1-ին մաս), ապա, օրինակ, ՌԴ օրենսդրությունը, անձի կարգավիճակի ձեռքբերման ինքնուրույն հիմք է դիտարկում նաև անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը, ինչպես նաև կասկածի մասին տեղեկացումը (ՌԴ քր. դատ. օր.-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետեր):

Քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի միասնականացումը (ունիֆիկացիան)¹, ուղիղ ազդեցություն է ունենում մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմի **ցածրացման վրա**: Բանն այն է, որ քրեական հետապնդման ենթարկվող անձի *միասնականացման պայմաններում*, երբ քրեական հետապնդման ենթարկվող անձը քրեական վարույթում ունենում է (կարող է ունենալ) միայն մեկ դատավարական կարգավիճակ՝ մեղադրյալի² կարգավիճակ, ապա արդեն մեղադրյալի քրեական վարույթ մուտքի համար կասկածի *բարձր* (կամ կասկածից բարձր՝ համոզմունքի) *շեմ դնելը խնդիր կստեղծի փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար*. վերջինս տևական ժամանակ՝ մինչև կասկածի (կամ կասկածից բարձր՝ համոզմունքի) համար անհրաժեշտ շեմին հասնելը, չի ստանա դատավարական կարգավիճակ, այսինքն՝ մինչ մինչդատական վարույթի վերջնամասը զրկված կլինի իր **սուբյեկտայնությունից**, ըստ այդմ նաև՝ զրկված լինելով իր իրավունքների ու օրինական շահերի (արդյունավետ) պաշտպանության հնարավորությունից:

Ոստիև՝ փաստացի քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի կարգավիճակի միասնականացմանը (ունիֆիկացիային) զուգահեռ ազգային քրեադատավարական համակարգերում **իջեցվում է** (պետք է իջեցվի) մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմը՝ այդպիսով իսկ ապահովելով վարույթի վաղ փուլերից մեղադրյալի իբրև սուբյեկտ հանդես գալու հնարավորությունը: Համանման մոտեցում է որդեգրել նաև Օրենսգիրքը:

6. Քրեական դատավարության գործող օրենսգրքով մեղադրյալի՝ քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմի նվազեցումը

¹ Այս միտումը տեղ է գտնում ժամանակակից հետխորհրդային մի շարք երկրներում (Ուկրաինա, Լիտվա, Էստոնիա և այլն), մանրամասն տե՛ս **Коновалов С.Г.** Նշվ. աշխ., էջ 172-179:

² Որոշ երկրներում՝ միայն կասկածյալի:

Օրենսգրքում քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակը ունիֆիկացված է. Օրենսդիրը հրաժարվել է կասկածյալի կարգավիճակից, և, չհաշված ձերբակալվածի խիստ կարճատև կարգավիճակը, սահմանում է քրեական հետապնդման ենթարկվող անձ մեկ միասնական մեղադրյալի կարգավիճակ:

Նման պայմաններում արդեն վարույթ մեղադրյալի «մուտքի» համար «խորհրդային»՝ կասկածից բարձր՝ հանցանքի կատարման մեջ անձի մեղավորության մասին համոզմունքի շեմի պահպանումն ուղղակիորեն կվտանգեր քրեական հետապնդման ենթարկվող անձի նախաքննության փուլում սուբյեկտայնությունը: Վերջինս, չունենալով այլընտրանքային որևէ կարգավիճակ, նախաքննության մեծագույն հատվածում առավելապես հանդես կգար իբրև քննության օբյեկտ՝ չունենալով որևէ կարգավիճակ. միայն նախաքննության վերջին մոտեցող մասում, երբ կհավաքվեին «բավարար ապացույցներ», այսինքն՝ նախաքննության ավարտի հայտարարումից առաջ միայն (ինչպես որ իրականացվում էր խորհրդային 1930-1940-ական թվականներին) անձը ձեռք կբերեր դատավարական մեղադրյալի կարգավիճակ, որպիսի իրավիճակը ուղիղ հակասության մեջ է մտնում անձի արժանապատվության հետ¹, այնպես էլ առանցքային կերպով ներազդում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի արդյունավետության վրա:

Ուստի այս համատեքստում բախվելով նման խնդրի՝ Օրենսդիրը կամա-ակամա բախվեց մեղադրյալի «վարույթի» մուտքի համար անհրաժեշտ կասկածի շեմի իջեցման խնդրին:

Որպես լուծում Օրենսդիրը հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշման համար *հրաժարվեց կասկածից վեր՝ բարձր շեմ ամրագրող «խորհրդային» «բավարար ապացույցների համակցություն» համոզմունքի չափանիշից* (1998 թ. քր. դատ. օր.-ի 202-րդ հոդվածի 1-ին

¹ Տե՛ս **Ղազարյան Ա.**, Մայրցամաքային խառը տիպի քրեական դատավարությունում մեղադրյալի սուբյեկտայնացման համընդհանուր միտումը և դրան հակառակ ընթացող հայկական օրենսդրական զարգացումները (վերաքննիչ դատարանում գրավոր ընթացակարգով կալանքի (դրա երկարաձգման) միջնորդությունների քննության արդյունքում կայացված որոշումների վերանայման լույսի ներքո), << Սահմանադրական դատարան, Տեղեկագիր, No 3 (111) 2023, էջ 67-111:

մաս), փոխարինելով այն բոլորովին այլ՝ «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշով (Օրենսգրքի 189-րդ հոդված):

Հենց իրենք՝ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հեղինակներն այս առիթով գրում են. «(...) Օրենսգիրքը հրաժարվել է **կասկածյալին** վարույթի մասնավոր մասնակից համարելուց (...) Դա պայմանավորված է երկու հանգամանքով.

1/ **էապես իջել է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար անհրաժեշտ ապացուցողական շեմը**, այսինքն՝ քրեական վարույթում մեղադրյալ ունենալու համար այսուհետ բավարար է անձի կողմից **հանցանքի կատարումը վկայող փաստերի առկայությունը**,

2/ **մեղադրյալ չհանդիսացող, սակայն հանցագործության մեջ կասկածվող անձը** վարույթային հարաբերություններին մասնակից կարող է դառնալ **միայն մեկ ձևով՝ երբ ձերբակալվել է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում**»¹ (միայն թավ ընդգծումներն իմն են՝ Հեղ.):

Ինչպես ակնհայտ է դառնում մեջբերված հատվածից, ըստ հեղինակների, մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար կասկածի շեմը «հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշով այնչափ է իջեցվել, որ բոլոր դեպքերում, երբ լինի անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկած, արդեն պետք է անձը վարույթին մասնակից դարձվի իբրև *մեղադրյալ* (բացի անձին անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալելու դեպքից):

Այդպիսով՝ օրենսդիրը լուծեց քրեական հետապնդման ենթարկվող անձի սուբյեկտայնության խնդիրը կարգավիճակի ունիֆիկացիայի պայմաններում՝ հրաժարվելով մեղադրյալի վարույթ «մուտքի» համար խորհրդային «ապացույցների բավարար համակցության» չափանիշից՝ փոխարենը ամրագրելով նոր՝ «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշ:

¹ Տե՛ս **Ղուկասյան Հ., Մեջրոնյան Դ., Նիկողոսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022 թ., էջեր 110-111:

«Անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշն արդեն ժամանակակից հայ իրավաբանին առնվազն ծանոթ է ՄԻԵԴ իրավաբանությունից, մասնավորապես նրա կողմից «հիմնավոր կասկածի» չափանիշի սահմանումներից: Սակայն, եթե վերջինի՝ «հիմնավոր կասկածի» դեպքում, անհրաժեշտ են «հանցանքի կատարումը վկայող փաստեր (տվյալներ կամ ապացույցներ)» **միաժամանակ նաև**, որ դրանք «օբյեկտիվ դիտորդին **համոզիչ լինեն**, որ հավանական է՝ անձը հանցանք է կատարել», ապա, Օրենսգրքի սահմանած՝ «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշի պայմաններում բացակայում է «օբյեկտիվ դիտորդին **համոզիչ լինելու**» «հիմնավոր կասկածի» համար անհրաժեշտ պայմանը (շեմը):

Ըստ այդմ՝ Օրենսդիրը, լուծելով քրեական հետապնդման ենթակա անձի սուբյեկտայնացման խնդիրը, մեղադրյալի «մուտքի» համար անհրաժեշտ շեմը իջեցրեց «հանցանքի կատարումը վկայող փաստերի» շեմի, որն իրենից ներկայացնում է քրեորեն հետապնդելի արարքի կատարման *նվազագույն հավանականություն*, որի ծագումը պետք է համընկած համարել քրեական վարույթի ընթացքում *առաջին անձնավորված կասկածի ծագման հետ*:

Քրեորեն հետապնդելի արարքի կատարման *նվազագույն հավանականության* կասկածի նման ցածր շեմի դեպքում մեղադրյալի «մուտքի» համար (1) *անհրաժեշտ չէ*, որ հավաստվի անձի ենթադրյալ հանցանքի կատարումը և նրա մեղավորությունը (ինչպես «բավարար ապացույցների համակցության» չափանիշի դեպքում էր), *անհրաժեշտ չէ նաև*, որ անձի կողմից հանցանքի կատարման մասին կասկածը լինի *համոզիչ* (հիմնավոր կասկածի շեմ), (3) այլ միայն **անհրաժեշտ է** ծագի հանցանքի կատարման **անձնավորված կասկածը**, այսինքն, որ անձի կողմից ենթադրյալ հանցանքի կատարումը, ելնելով կրիմինալիստիկական փորձից, լինի *ողջամտորեն հնարավոր (ողջամտորեն ոչ*

բացառելի) կասկածներից մեկը, որը, սակայն, չի բացառում այլ կասկածների հնարավորությունը¹:

Կասկածի այդպիսի շեմը *ողջամտորեն հնարավոր տարբերակներից մեկն է*, որը պետք է ունենա փաստական որոշակի հենք, բարձր լինի այսպես կոչված ինտուիտիվ զգացողություններից, հստակ անձնավորի ենթադրյալ հանցանք կատարած անձին, սակայն այն ընդհանրապես չի պահանջում և չի ենթադրում հանցակազմի (բոլոր) տարրերի ապացուցվածություն կամ անձի կողմից հանցանքի կատարման համոզականություն (բարձր հավանականություն): Այդպիսի կասկած կարող է լինել, օրինակ, այն դեպքերում, երբ հանցագործության մասին բանավոր հաղորդմամբ կոնկրետ անձը մատնանշվում է իբրև հանցագործության կատարող՝ հստակ անձնավորող տվյալների մատնանշմամբ (անձի անունը, ազգանունը, նրա վերաբերյալ այլ անհրաժեշտ տվյալների առկայություն):

7. Զարգացած իրավակիրառ պրակտիկայի թույլատրելիությունը նոր օրենսգրքի կարգավորումների իրողության պայմաններում

Նախորդիվ ասվածի լույսի ներքո անդրադարձ կատարելով նոր օրենսգրքի գործարկման պայմաններում իրավակիրառ պրակտիկային՝ կարելի է արձանագրել, որ այն ոչ միայն չփոփոխվեց (բացի եզակի բացառիկ դեպքերից)՝ պահպանելով գրեթե մեկ հարյուրամյակ առաջ ձևավորված «խորհրդային» մոտեցումը՝ մեղադրյալի վարույթ «մուտքի»

¹ Այս լույսի ներքո, հայկական իրավաբանական նորագույն գրականության մեջ հարցի վերաբերյալ արտահայտված մոտեցումը, թե Օրենսգրքի 189-րդ հոդվածի տեսանկյունից անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի գնահատման տեսանկյունից անհրաժեշտ է, որ բոլոր ապացույցների նախնական գնահատման հիման վրա դատախազը հանգի հետևություն, որ «... մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է» (տե՛ս Հովհաննիսյան Գ., «Կասկածի դեպքում հոգուտ մեղադրյալի» (IN DUBIO PRO REO)//Պետություն և իրավունք N 2 (96) 2023, էջ 207), պետք է դիտարկել իբրև սխալ և քրեադատավարական օրենսգրքում համակարգային փոփոխությունները հաշվի չառնող: Ավելին՝ նման մոտեցմամբ շփոթվում են մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմը՝ մինչդասական վարույթից մեղադրյալի դեպի դատական վարույթ «ելքի» համար անհրաժեշտ կասկածից վեր շեմի հետ: Ի դեպ՝ հեղինակը հենց իր այդ տեսակետը հիմնավորելու համար Օրենսգրքի 189-րդ հոդվածի բովանդակության բացահայտման տեսանկյունից հղում է անում մեղադրական եզրակացությամբ նախաքննության ավարտը կանոնակարգող դրույթին՝ Օրենսգրքի 199-րդ հոդվածին, տե՛ս, նույն տեղում:

համար հանցակազմի բոլոր տարրերի ապացուցվածության, անձի կողմից հանցանք կատարելու մեղավորության համոզմունքի չափանիշը, այլև՝ հանրային քրեական հետապնդման առավելագույն ժամկետների անցման հետևանքներից բխող նեղ գերապեսչական կամ անձնային մրավախոսություններով պայմանավորված, գործնականում սկսվեց մեղադրյալի «մուտքը» քրեական վարույթ էլ ավելի հետաձգել՝ այն գրեթե ամբողջապես մոտեցնելով նախաքննության վերջնամասին:

Այդպիսի իրավակիրառ պրակտիկան, որն ուղիղ հակառակ է մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովմանն ուղղված հանրային քրեական հետապնդման ժամկետների ինստիտուտի նպատակային նշանակությանը¹, ոչ այլ ինչ է, քան քրեական հետապնդման ենթարկվող անձի սուբյեկտայնության մերժում գրեթե ամբողջ նախաքննության ընթացքում և խախտում է անխախտելին՝ անձի արժանապատվությունը (Սահմանադրության 23-րդ հոդված)՝ նախաքննության ընթացքում մեղադրյալի պաշտպանության իրավունքը դարձնելով ոչ իրական, պատրանքային: Ուստիև այդպիսի պրակտիկան հրատապ փոփոխության անհրաժեշտություն ունի:

8. Օրենսգրքով քրեական վարույթ մեղադրյալի «մուտքի» համար կասկածի շեմի նվազեցումը և մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության երաշխիքները

*8.1. Մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի (նվազագույն, հիմնավոր) հաստատումը **ապացույցներով***

Վերը արդեն նշվեց, որ կասկածի շեմի բարձրացումը խորհրդային իրավունքի կողմից նպատակ էր հետապնդում երաշխավորել քրեական հետապնդման ներգրավման ենթակա անձի իրավունքների պաշտպա-

¹ Քրեական վարույթով «ողջամիտ ժամկետի» հաշվարկը կարող է սկիզբ առնել ոչ միայն ձևական առումով քրեական հետապնդման հարուցման, այլ՝ փաստացի քրեական հետապնդման հարուցման պահից, երբ քրեական գործով քննության կամ վարույթի շրջանակում ձեռնարկված միջոցառումներն էական ազդեցություն են թողել գանգատաբերի վրա, տե՛ս վերաբերելի մասով ՄԻԵԴ Liblik and others v. Estonia գործով (գանգատներ թիվ 173/15, 181/15, 374/15, 383/15, 386/15 and 388/15) 2019 թ. մայիսի 28-ին կայացված վճիռը § 94:

նություները, և հակառակը՝ Օրենսգրքով կասկածի շեմի նվազեցման պայմաններում առաջ է գալիս մեղադրյալի իրավունքների պաշտպանության խնդիրը: Իբրև վերջինիս իրավունքների պաշտպանության երաշխիք, օրենսդիրը պահպանել է մեղադրյալի կարգավիճակի ընկալման **ձևական մոտեցումը**. մեղադրյալ է ոչ թե այն անձը, ում նկատմամբ առկա է «նվազագույն» կամ «հիմնավոր» կասկած, այլ այն անձը, ում նկատմամբ առկա թեկուզ «նվազագույն» կասկածը **հավաստվում է քրեադատավարական ապացույցներով** (Օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մաս) և ում նկատմամբ կայացվել է հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշում (Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ):

Այլ կերպ ասած՝ անձին մեղադրյալի կարգավիճակ տալու համար միայն *բովանդակային կողմը*՝ նրա նկատմամբ *առկա (նվազագույն, հիմնավոր) կասկածի աստիճանը* դեռ բավարար չէ, անհրաժեշտ է *որոշակի ձևական կողմ*՝ անձի նկատմամբ առկա *կասկածը (նվազագույն, հիմնավոր) հավաստվի քրեադատավարական ապացույցներով* (Օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մաս):

Օրենսդրի այսպիսի մոտեցումը մի կողմից ապահովում է վարույթի կասկածի անձնավորման սկզբնական պահերից մեղադրյալին ներգրավելու հնարավորությունը, մյուս կողմից՝ սահմանելով կասկածի քրեադատավարական ապացույցներով հաստատման պահանջ, երաշխավորում է թույլատրելի, վերաբերելի և հավաստի ապացույցների հիման վրա քրեական հետապնդման հարուցման որոշման կայացումը:

Հանրային քրեական հետապնդման հարուցման համար անհրաժեշտ ոչ միայն **բովանդակային** (կասկածի նվազագույն, հիմնավոր աստիճան), այլ նաև այդ **ձևական** (կասկածի հավաստումը քրեադատավարական ապացույցներով) կողմերի միասնության պայմաններում է, որ Օրենսդիրը հարկադրված «կառուցել է» ձերբակալվածի ժամանակավոր (քվազի) կարգավիճակը, ով թեև ձերբակալվել է անմիջականորեն ծագած *հիմնավոր կասկածի հիման* վրա (առկա է հանրային քրեական հետապնդման հարուցման համար անհրաժեշտ բովանդակային կողմը), սակայն, միևնույն ժամանակ, անիջականորեն ծագած հիմնավոր

կասկածի հիմքով ձերբակալման պահին և դրանից հետո որոշակի կարծարև ժամանակահատվածում դեռևս բացակայելու է հանրային քրեական հետապնդման հարուցման համար անհրաժեշտ ձևական կողմը՝ կասկածի ապացույցներով հաստատվելը:

Միայն կասկածի՝ ապացույցներով հաստատվելուց հետո, քննարկվող դեպքում՝ ձերբալման արձանագրության, ձերբակալվածի ցուցմունքի, այլ ապացույցների, օրինակ, անձի իբրև հանցանքի կատարող մատնանշող վկայի ցուցմունքի հիման վրա կասկածի հաստատման դեպքում (քննարկվող դեպքում՝ հիմնավոր կասկածի հաստատման) հնարավոր կլինի անձի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում:

Նման պայմաններում արդեն՝ նախկին իրավակիրառ պրակտիկային հայտնի «վկա-կասկածյալի» վարույթի մասնակցության հնարավորությունները, ըստ էության, հասնում են նվազագույնի. այդպիսի հնարավորություն կարող է լինել միայն այն կարճաժամկետ ու բացառիկ դեպքերում, երբ անձի նկատմամբ առկա նվազագույն (կամ հիմնավոր) կասկածը դեռևս չի հավաստվել քրեադատարական ապացույցներով:

8.2. Մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունների տարբերակումը՝ ըստ մեղադրյալի նկատմամբ առկա կասկածների աստիճանի

Քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի միասնականացման և մեղադրյալի քրեական վարույթ «մուտքի» համար անհրաժեշտ կասկածի շեմի նվազագույն աստիճանի իջեցման պայմաններում Օրենսդիրը, որպես մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության երաշխիք, նաև անուղակիորեն տարբերակել է մեղադրյալի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները՝ ըստ մեղադրյալի նկատմամբ առկա կասկածների աստիճանի:

Մեղադրյալի նկատմամբ առաջին՝ նվազագույն կասկածի աստիճանի առկայության պայմաններում, նրա նկատմամբ կարող են կիրառվել դատավարական վերաբերելի սանկցիաները (Օրենսգրքի 141-րդ հոդված), մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքը կարող է արգելադրվել (Օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ, 132-րդ հոդվածի 1-ին մաս):

Կասկածի այս նվազագույն աստիճանի պայմաններում, սակայն, *չի կարող կիրառվել որևէ խափանման միջոց* (Օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մաս): Մեղադրյալի նկատմամբ կասկածները նվազագույնից միայն *հիմնավորի կասկածի* անցման պայմաններում է, որ վարույթն իրականացնող մարմինը իրավասու կլինի կիրառել (միջնորդել, որ կիրառվի) խափանման միջոց (դրա(նց) կիրառման համար անհրաժեշտ այլ պայմանների և հիմքերի առկայության դեպքում):

Ավելին, նման դեպքերում՝ մեղադրյալը խափանման միջոցի կիրառման փաստից և այդ որոշումից իսկ արդեն ինքնաբերաբար տեղեկացվում է իր նկատմամբ առկա կասկածների *առավել ամրապնդման՝ հիմնավոր կասկածների վերաճման մասին*: Սա ինքնին պակաս կարևոր չէ մեղադրյալի պաշտպանության մարտավարության պլանավորման և ընդհանուր առմամբ պաշտպանության արդյունավետ կազմակերպման համար:

9. Մեղադրյալի «ելքը» մինչդատական վարույթից

Մեղադրյալի ելքը մինչդատական վարույթից հնարավոր է երկու եղանակով՝ նրա նկատմամբ քրեական հետապնդման դադարեցմամբ (քր. դատ. օր-ի 12-րդ հոդված) կամ մեղադրական եզրակացությունը հաստատելու (կամ այն վերակազմելու դեպքում) դատախազի որոշմամբ մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերը իրավասու դատարան հանձնելով:

Երկրորդի պարագայում՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու (կամ այն վերակազմելու) որոշման դեպքում կրկին առաջ է գալիս մեղադրյալի նկատմամբ առկա կասկածի շեմի հարցը:

Ահա այստեղ, այս որոշման համար է, որ պահպանվել է «բավարար ապացույցների» համակցության ձևակերպումը, այսինքն՝ «անձի կողմից հանցանք կատարելու կասկածից վեր՝ համոզմունքի» «խորհրդային» չափանիշը: Օրենսդիրը դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու (կամ այն վերակազմելու) որոշման կայացման պայման է համարում դատարանում մեղադրյալին վերագրվող արարքը կատարելու մեջ նրա մեղավորությունն ապացուցելու համար անհրաժեշտ

«բավարար ապացույցների» առկայությունը (Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

Իր հերթին՝ քննիչը, որպեսզի հավաքված բոլոր ապացույցները գնահատելով հանգի հետևության, որ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է, ուստիև ձեռնամուխ լինի մեղադրական եզրակացություն կազմելուն (Օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մաս) իր հերթին պետք է հավաքված ապացույցների համակցությունը «բավարար համարի», այսինքն ձևավորի *համոզմունք անձի կողմից հանցանքի կատարման մասին*:

Միայն անձի մեղավորության, հանցակազմի տարրերի, ապացուցման ենթակա այլ հանգամանքների ապացուցվածության պայմաններում է, այսինքն «բավարար ապացույցների համակցության» առկայության պայմաններում է, որ քննիչը կարող է կանխորոշել դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելու (կամ այն վերակազմելու) որոշման կայացման անհրաժեշտ պայմանի առկայությունը (Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ), ըստ այդմ՝ նաև անձի դատապարտման մեծապես հավանականությունը:

Ինչ վերաբերում է «մեծապես հավանականությանը», ապա այդպիսի ձևակերպումը ոչ թե վկայում է քննիչի՝ մեղադրյալի կողմից հանցանք կատարելու կասկածները համոզմունքի չվերածելու և խորհրդային այդ չափանիշի բացակայության մասին, այլ լուրջ այն մասին, որ ապացույցների պատշաճ ապացուցման սկզբունքից բխող ապացույցների ազատ և բարեխիղճ գնահատման պահանջը (Օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մաս), ենթադրում է, որ վարույթի հետագա փուլերում՝ վարույթն իրականացնող մարմինը կաշկանդված չի լինելու նախորդ փուլերում ապացույցներին տրված գնահատականով, ինչպես նաև՝ դատական վարույթի ճանաչողության՝ նոր ապացույցների ձեռքբերման ինքնուրույն հնարավորությամբ:

Այսպիսով՝ մեղադրյալի մինչդատական վարույթից ելքի համար է, որ թե՛ քննիչի և թե՛ դատախազի կողմից՝ համապատասխանաբար մեղադրական եզրակացություն և մեղադրական եզրակացությունը հաստա-

տելու (կամ այն վերակազմելու) որոշումները կայացնելիս պետք է առկա լինի «բավարար ապացույցների համակցությունը» և ըստ այդմ՝ մեղադրյալի կողմից հանցանք կատարելու համոզմունքը:

10. Եզրահանգումներ

1. Դեռևս 1800-ականների վերջերից և 1900-ականների սկզբերից, քրեական դատավարության տեսության մեջ ձևավորվում է այն մոտեցումը, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ է «կասկածի» բարձր շեմ:

Հետագայում՝ խորհրդային դոկտրինը և իրավակիրառ պրակտիկան, ելնելով մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի ապահովման անհրաժեշտությունից, մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ «կասկածի» շեմն էլ ավելի են բարձրացնում, որը պահպանվում է նաև մեր ժամանակներում:

2. Սակայն, մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ «կասկածի» բարձր շեմը առաջ է բերում փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձի ապաստույթելոստայնացման իրավիճակ. անձը մեղադրյալի կարգավիճակ է ձեռք բերում մինչդատական վարույթի ավարտին, ինչը գործնականում հանգեցնում է մի իրավիճակի, որ վերջինս մինչդատական վարույթում հանդես է գալիս առավելապես իբրև վարույթի օբյեկտ:

3. Ինդրի լուծման համար խորհրդային (հետխորդային) լուծումը քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի տարբերակումն էր (դիֆերենցացիան), որի պայմաններում հնարավոր էր լինում պահպանելով մեղադրյալ ներգրավելու համար անհրաժեշտ «կասկածի» բարձր շեմը, միևնույն ժամանակ նաև պահպանել փաստացի քրեական հետապնդման ենթարկվող անձի սուբյեկտայնությունը:

4. Դրան հակառակ՝ քրեական հետապնդման ենթարկվող անձի կարգավիճակի միասնականացումը (ունիֆիկացիան) անհնար է դարձնում պահպանել մեղադրյալ ներգրավելու (հանրային քրեական հետապնդման հարուցման) համար անհրաժեշտ «կասկածի» խիստ բարձր շեմը: Այս պատճառով օրենսդիրը հրաժարվեց բանաձևային նշանակություն ունեցող «խորհրդային» «բավարար ապացույցների համակցության»

չափանիշից՝ փոխարինելով այն «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշով:

5. Հանրային քրեական հետապնդում հարուցելու համար անհրաժեշտ «կասկածի» օրենսդրի կողմից սահմանված նոր չափանիշը՝ «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերը», ցածր է անգամ «հիմնավոր կասկած» չափանիշից:

Եթե «հիմնավոր կասկածի» դեպքում անհրաժեշտ են «հանցանքի կատարումը վկայող փաստեր (տվյալներ կամ ապացույցներ)», **միաժամանակ նաև**, որ դրանք «օբյեկտիվ դիտորդին **համոզիչ լինեն**, որ հավանական է՝ անձը հանցանք է կատարել», ապա Օրենսգրքի սահմանած՝ «անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերի» չափանիշի պայմաններում բացակայում է «օբյեկտիվ դիտորդին **համոզիչ լինելու**» «հիմնավոր կասկածի» համար անհրաժեշտ պայմանը (շեմը):

6. «Հանցանքի կատարումը վկայող փաստերի» շեմը իրենից ներկայացնում է քրեորեն հետապնդելի արարքի կատարման *նվազագույն հավանականություն*: Այդ «կասկածի» ծագումը պետք է համընկած համարել քրեական վարույթի ընթացքում *առաջին անձնավորված կասկածի ծագման հետ*: Նման կասկածի համար անհրաժեշտ է, որ անձի կողմից ենթադրյալ հանցանքի կատարումը, ելնելով կրիմինալիստիկական փորձից, լինի *ողջամտորեն հնարավոր (ողջամտորեն ոչ բացառելի) կասկածներից մեկը, որը, սակայն, չի բացառում նաև այլ կասկածների հնարավորությունը*:

«Կասկածի» այդպիսի շեմը *ողջամտորեն հնարավոր տարբերակներից մեկն է*, որը պետք է ունենա փաստական որոշակի հենք, բարձր լինի այսպես կոչված ինտուիտիվ զգացողություններից, հստակ անձնավորի ենթադրյալ հանցանք կատարած անձին, սակայն այն ընդհանրապես չի պահանջում և չի ենթադրում հանցակազմի (բոլոր) տարրերի ապացուցվածություն կամ անձի կողմից հանցանքի կատարման համոզակա-նություն (բարձր հավանականություն):

7. Նման փոփոխությունների պայմաններում, իրավակիրառ պրակտիկայում «խորհրդային» բարձր չափանիշի իներցիայի ուժով մեխանիկական պահպանումը անթույլատրելի է, հանգեցնում է քրեական

հետապնդան ենթարկվող անձի մինչդատական վարույթում, դրա մեծ մասում, իբրև օբյեկտ հանդես գալուն :

8. Կախված կասկածի աստիճանից, օրենսդիրը տարբերակել է նաև («նվազագույն կասկած», «հիմնավոր կասկած»), մեղադրյալի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները:

9. Օրենսդիրն ամբողջությամբ չի հրաժարվել «բավարար ապացույցների» համակցության խորհրդային բանաձև-չափանիշից՝ ամրագրելով այն իբրև մեղադրյալի մինչդատական վարույթից (դեպի դատական վարույթ) «ելքի» չափանիշ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ավագյան Վ.**, Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը: Եր., «Օրենք և իրականություն» հրատ., 2006 թ:

2. **Հովհաննիսյան Գ.**, «Կասկածի դեպքում hoqուտ մեղադրյալի» (IN DUBIO PRO REO) // Պետություն և իրավունք, N 2 (96) 2023:

3. **Ղազարյան Ա.**, Մայրցամաքային խառը տիպի քրեական դատավարությունում մեղադրյալի սուբյեկտայնացման համընդհանուր միտումը և դրան հակառակ ընթացող հայկական օրենսդրական զարգացումները (վերաքննիչ դատարանում գրավոր ընթացակարգով կալանքի (դրա երկարաձգման) միջնորդությունների քննության արդյունքում կայացված որոշումների վերանայման լույսի ներքո), ՀՀ Սահմանադրական դատարան, Տեղեկագիր, No 3 (111) 2023:

4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2: Գիտ. խմբ. Ա.Ղամբարյան: Երևան, Տիգրան Մեծ, 2017 թ.:

5. **Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ., Նիկողոսյան Ա.**, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, 2022 թ.:

6. Курс советского уголовного процесса. Общая часть / **Алексеев В.Б., Алексеева Л.Б., Божьев В.П., Бойков А.Д. и др.** / Под ред. Бойкова А.Д., Карпеца И.И. - М.: Юрид. лит., 1989.

**ПОРОГ “ПОДОЗРЕНИЯ”, НЕОБХОДИМЫЙ ДЛЯ
“ВСТУПЛЕНИЯ” ОБВИНЯЕМОГО В УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС
(СИЛА ИНЕРЦИИ ИЛИ ИГНОРИРОВАНИЕ
ЗАКОНОДАТЕЛЬНОЙ “РЕВОЛЮЦИИ” В
ПРАВОО ПРИМЕНИТЕЛЬНОЙ ПРАКТИКЕ)**

Аннотация

Со вступления в силу нового Уголовно-процессуального кодекса РА, за этот уже не малый срок выяснилось интересное обстоятельство: армянская правоприменительная практика не заметила (или проигнорировала) ключевое, не будет излишним даже сказать революционное изменение, которое нашло место в Кодексе и было напрямую связано со статусом обвиняемого лица.

Правоприменительная практика не заметила (или проигнорировала) отказ от “советского” порога “подозрения”, необходимого для “вступления” обвиняемого в уголовный процесс по делам о публичном обвинении, и определение совершенно нового порога, стандарта подозрений.

Однако в то же время в статье делается попытка обосновать, что законодатель отказался от “советского” порога “подозрения” только для “вступления” обвиняемого в уголовное производство, а для “выхода” обвиняемого из досудебного производства (в судебное производство) этот критерий был сохранен.

Данная статья посвящена вопросам изменения порогов подозрения для “вступления” обвиняемого в уголовное судопроизводство, в ней обсуждается игнорирование такого изменения в юридической практике, а также раскрываются возможности реализации ряда уголовно-процессуальных гарантий в условиях таких изменений.

Ключевые слова: обвиняемый, порог подозрения, минимальное подозрение, обоснованное подозрение, совокупность достаточных доказательств, субъект уголовного процесса, объект уголовного процесса.

THE THRESHOLD OF “SUSPICION” REQUIRED FOR A DEFENDANT TO “ENTER” A CRIMINAL TRIAL (FORCE OF INERTIA OR IGNORING THE LEGISLATIVE “REVOLUTION” IN LAW ENFORCEMENT PRACTICE)

Annotation

With the entry into force of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia in this, not a short period, an interesting circumstance became clear: Armenian law enforcement practice did not notice (or ignored) the key, in the definition of which it would not be superfluous even to say revolutionary change, which found a place in the Code and was directly related to the status of the accused person.

Law enforcement practice has overlooked (or ignored) the abandonment of the "Soviet" threshold of "suspicion" required for a defendant to "enter" criminal proceedings in public prosecution cases and the definition of an entirely new threshold, the standard of suspicion.

At the same time, however, the article attempts to justify that the legislator abandoned the "Soviet" threshold of "doubt" only for the "entry" of the accused into criminal proceedings, while for the "exit" of the accused from pre-trial proceedings (into court proceedings) this criterion was retained.

This article is devoted to the issues of changing the thresholds of suspicion for the "entry" of the accused into criminal proceedings, discusses the neglect of such a change in legal practice, and the article reveals the possibility of realizing a number of criminal procedural guarantees in the conditions of such changes.

Keywords: accused, threshold of suspicion, minimum suspicion, reasonable doubt, totality of sufficient evidence, subject of criminal proceedings, object of criminal proceedings.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 16.01.2024 թ., տրվել է գրախոսության 18.01.2024 թ., ընդունվել է տպագրության 18.01.2024 թ.: